ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/97

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.06.2018թ. թիվ 26-3/11906-18 գրությամբ «Աննա 80» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06906663) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 27.06.2018թ. թիվ 01/61-14850 գրության հիման վրա, 29.06.2018թ. նախաձեռնել է «Աննա 80» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 27.06.2018թ. թիվ 01/61-14850 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Աննա 80» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 17.03.2018 թվականին կնքված «ԵՔ–ԲԸԱՇՁԲ–18/54» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է նույն պայամանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն Պայմանագրի (այսուհետ՝ պայամանգիր) N1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի ինքնակամ կառույցների քանդման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի տեխնիկական բնութագրին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մաս կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 3.4.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով և պատշաճ որակով՝ տեխնիկական բնութագրին և ծավալաթերթին համապատասխան:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի 3-րդ կետի համաձայն՝ կատարման ենթակա աշխատանքները կրում են ամենօրյա բնույթ, որոնք պետք է իրականացվեն գնման պայամանգրով նախատեսված ամբողջ ժամկետում՝ 24 ժամյա ռեժիմով, որոնցից յուրաքանչյուրի իրականացման սկիզբը և այն կատարելու ժամկետը կնշվի համապատասխան պատվեր-առաջադրանքով, և այն ենթակա է կատարման կապալառու կազմակերպության տեխնիկական միջոցների և մասնագետների միջոցով:

Ընկերության կողմից չեն կատարվել պայմանագրային պարտավորությունները, այն է՝ Պայմանագրի 8.15 կետով սահմանված պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից 05.05.2018թ. թիվ 19/10295h և թիվ 19/10296h գրություններով տրվել են պատվեր-առաջադրանքներ, որոնք Ընկերության կողմից չեն իրականացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը փաստացի չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի, մասնակի (Պայմանագրի ընդհանուր գումարի 9,726,088 ՀՀ դրամի չափով)

հրաժարվել է կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի մասնակի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, առաջարկում եմ Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթները»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչ Գագիկ Հուրոյանը:

3. <u>«Աննա 80» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «Աննա 80» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.06.2018թ. թիվ 26-3/11906-18 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից գրավոր կարծիք չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Ռազմիկ Վարդերեսյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/97 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 29.06.2018թ. թիվ 26-3/11906-18 գրությունը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի 27.06.2018թ. թիվ 01/61-14850 գրությունը, Երևանի քաղաքապետարանի և «Աննա 80» ՍՊԸ-ի միջև 17.03.2018թ. կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-

18/54» ծածկագրով գնման պայմանագիրը, «Աննա 80» ՍՊԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետին ուղղված 24.06.2018թ. թիվ 24/06 գրությունը.

Երևանի քաղաքապետարանի և «Աննա 80» ՍՊԸ-ի միջև 17.03.2018թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-18/54» ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

•1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է նույն պայամանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի (այսուհետ՝ պայամանգիր) N1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի ինքնակամ կառույցների քանդման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

• 1.3 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 2018թ. դեկտեմբերի 31-ը:

• 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա)Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

• 3.4.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով,

գործիքներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով և պատշաճ որակով՝ տեխնիկական բնութագրին և ծավալաթերթին համապատասխան:

• 4.1 կետի համաձայն՝ կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

• 5.1 կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 10,000,000 ՀՀ դրամ:

• 8.11 կետի համաձայն՝ Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայամանգրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է կատարել աշխատանք՝ հետևյալ տեխնիկական բնութագրով.

1.Քարե կամ երկաթ-բետոնե ինքնակամ շենքերի կամ շինությունների քանդման աշխատանքներ.

1.1 Քարե կամ երկաթ-բետոնե ինքնակամ շենքերի կամ շինությունների քանդում.

1.2 Առանց համապատասխան շինարարության թույլտվության կամ շինարարության թույլտվությամբ նախատեսված պահանջների խախտմամբ իրականացված որոշակի աշխատանքների արդյունքում ձևավորված ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման)՝ անկախ դրա ծավալից և ավարտվածության աստիճանից.

1.3 Քանդման արդյունքում գոյացած շինարարական աղբի մաքրում և տարածքի նախկին տեսքի բերում:

2. Մետաղական ինքնակամ շինությունների (ավտոտնակներ, տաղավարներ, կմախքներ) ապամոնտաժման աշխատանքներ.

2.1 Մետաղական ինքնակամ շինությունների ապամոնտաժում.

2.2 Ապամոնտաժման արդյունքում գոյացած շինարարական աղբի մաքրում կամ ապամոնտաժված շինության նյութերի տեղափոխում և տարածքի նախկին տեսքի բերում,

3. Այլ բնույթի մետաղական շինությունների (մետաղական ցանցեր, դարպասներ: աստիճանավանդակներ, հարթակներ, հովհարներ, սյուներ և համանման այլ շինություններ կամ մետաղական կառուցվածքներ անկախ ծավալից և չափերից) ապամոնտաժման աշխատանքներ.

3.1 Այլ բնույթի մետաղական շինությունների ապամոնտաժում.

3.2 Ապամոնտաժման արդյունքում գոյացած շինարարական աղբի մաքրում կամ ապամոնտաժված շինության տեղափոխում:

4. Ինքնակամ իրականացված դռան կամ պատուհանի բացվածքների, հողազավթման արդյունքում վնասված տարածքների, փողոցներին կից մայթերի կամ մայթեզրների վերականգնման, ինքնակամ քանդված փոսորակների լիցքի և ապօրինի իրականացված շինարարության արդյունքում վնասված և վերականգնման ենթակա այլ համանման աշխատանքներ.

5. Քանդման աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ մեքենա-սարքավորումներ և տեխնիկական միջոցներ՝ ավտոկռունկ, հարթ թափքով բեռնատար ավտոմեքենա, ինքնաթափ ավտոմեքենա, էքսկավատոր (մինչև 20տ և մինչև 35տ), հիդրոմուրճ, զոդիչ, աշտարակ-վերնակ և մղան:

6. Քանդման կամ ապամոնտաժման ենթակա աշխատանքների իրականացման ընթացքում՝ ինքնակամ շինության տեխնիկական կառուցվածքի առանձնահատկությունից ելնելով, կարող են օգտագործվել, ինչպես տեխնիկական այլ միջոցներ, այնպես էլ 5-րդ կետում նշված տեխնիկական միջոցների փոխարինողներ:

7. Վերը նշված 1-4-րդ կետերի բոլոր քանդման (կամ ապամոնտաժման) աշխատանքները ենթակա են իրականացման Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետի կողմից՝

յուրաքանչյուր դեպքի համար տրվող համապատասխան պատվեր-առաջադրանքի հիման վրա:

8. Կատարման ենթակա աշխատանքները կրում են ամենօրյա բնույթ, դրանք պետք է իրականացվեն գնման պայմանագրով նախատեսված ամբողջ ժամկետում՝ 24 ժամյա ռեժիմով, որոնցից յուրաքանչյուրի իրականացման սկիզբը և այն կատարելու ժամկետը կնշվի համապատասխան պատվեր-առաջադրանքում և այն ենթակա է կատարման կապալառու կազմակերպության տեխնիկական միջոցների և մասնագետների միջոցով:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչություն կողմից 05.05.2018թ. թիվ 19/10295h և թիվ 19/10296h գրություններով «Աննա 80» ՍՊԸ-ին տրվել են պատվեր-առաջադրանքներ, որոնց կատարման համար 2018թ. մայիսի 5-ից մինչև մայիսի 6-ն ընկած ժամանակահատվածում Ընկերությունը պետք է իրականացներ՝

- Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Սարի Թաղ 25-րդ փողոց հ. 7 հասցեին կից՝ հիմքերի կառուցման և համայնային սեփականություն հանդիսացող հողամասը ապօրինի տիրապետումից ազատելու աշխատանքները,

- Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Բարձրաբերդի 1-ին փողոցի հ.27 հասցեի դիմաց քաղաքացի Բաղդասար Խալաթյանի կողմից մետաղական կոնստրուկցիաներով տաղավարի տեղադրման և համայնային սեփականություն հանդիսացող հողամասը ապօրինի տիրապետումից ազատելու աշխատանքները:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության մի շարք պաշտոնատար անձանց կողմից 08.05.2018թ. կազմվել է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Բարձրաբերդի 1-ին փողոցի հ.27 հասցեի դիմաց և Սարի Թաղ 25-րդ փողոց հ. 7 հասցեին կից նախատեսվող քանդման կամ ապամոնտաժման մասին արձանագրություն, որի համաձայն՝ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Բարձրաբերդի 1-ին փողոցի հ.27 հասցեի դիմաց և Սարի Թաղ 25-րդ փողոց հ.7 հասցեին կից՝ առանց համապատասխան թույլտվության իրականացվել է մետաղական կոնստրուկցիաներով ինքնակամ տաղավարի տեղադրման և բնակելի տան երկաթբետոնե հիմքերի կառուցման շինարարական աշխատանքներ, որի քանդման աշխատանքները նախատեսվել է իրականացնել «Աննա 80» ՍՊԸ կապալառու

կազմակերպության կողմից 2018թ. մայիսի 5-ից մինչև մայիսի 6-ն ընկած ժամանակահատվածում, սակայն վերը նշված ժամանակահատվածում ու վայրերում «Աննա 80» ՍՊԸ-ն չի ապահովել ՈԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/54 գնման պայմանագրի 3.4.1 կետով նախատեսված պարտավորությունը, որի արդյունքում չեն իրականացվել քանդման ենթակա ինքնակամ կառույցների քանդման աշխատանքները:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և Ընկերության միջև 04.06.2018թ. ստորագրվել է հանձնման-ընդունման N1 արձանագրությունը, որի համաձայն՝ Ընկերությունը կատարել է Կենտրոն վարչական շրջանի Խորենացու 2-րդ փակուղի N17/7 հասցեում կառուցված շվաքարանի քանդման աշխատանքները՝ 273,912 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Պատվիրատուն 22.06.2018թ. թիվ 61/776 գրությամբ դիմել է «Աննա 80» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ Ընկերությունը չի կատարել Պատվիրատուի կողմից 05.05.2018թ. թիվ 19/10295h և թիվ 19/10296h գրություններով տրված պատվեր-առաջադրանքները, ինչի արդյունքում Երևանի քաղաքապետարանը միակողմանի, մասնակի (Պայմանագրի ընդհանուր գումարի 9,726,088 ՀՀ դրամի չափով) հրաժարվում է կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված՝ միաժամանակ առաջարկելով Ընկերությանը նույն ծանուցումը ստանալու օրվա դրությամբ վճարել Պայմանագրով նախատեսված տուգանքը:

Ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Ընկերության տնօրենը՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով պարտավորությունների չկատարման պատճառաբանությունները՝ հայտնեց, որ Պայմանագրով սահմանված աշպխատանքների կատարման ընթացքում Ընկերությունը հանդիպել է մի շարք խոչընդոտների, ինչի արդյունքում վերջինիս չի հաջողվել սահմանված ժամկետում կատարել պատվեր-առաջադրանքները: Մասնավորապես.

Սարի Թաղ 25-րդ փողոց հ. 7 հասցեին կից նախատեսված քանդման աշխատանքների իրականացման ժամանակ Ընկերության աշխատակիցները հանդիպել են ինքնակամ կառուցապատողի դիմադրությանը, նրանց միջև ծագել է թեժ վիճաբանություն, որը Ընկերության տնօրենը փորձել է հարթել բանակցությունների միջոցով: Արդյունքում, ինքնակամ կառուցապատողը համաձայնել է դադարեցնել

կազմակերպության կողմից 2018թ. մայիսի 5-ից մինչև մայիսի 6-ն ընկած ժամանակահատվածում, սակայն վերը նշված ժամանակահատվածում ու վայրերում «Աննա 80» ՍՊԸ-ն չի ապահովել ՈԵՔ-ԲՄԱԾՁԲ-18/54 գնման պայմանագրի 3.4.1 կետով նախատեսված պարտավորությունը, որի արդյունքում չեն իրականացվել քանդման ենթակա ինքնակամ կառույցների քանդման աշխատանքները:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և Ընկերության միջև 04.06.2018թ. ստորագրվել է հանձնման-ընդունման N1 արձանագրությունը, որի համաձայն՝ Ընկերությունը կատարել է Կենտրոն վարչական շրջանի Խորենացու 2-րդ փակուղի N17/7 հասցեում կառուցված շվաքարանի քանդման աշխատանքները՝ 273,912 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

Պատվիրատուն 22.06.2018թ. թիվ 61/776 գրությամբ դիմել է «Աննա 80» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ Ընկերությունը չի կատարել Պատվիրատուի կողմից 05.05.2018թ. թիվ 19/10295h և թիվ 19/10296h գրություններով տրված պատվեր-առաջադրանքները, ինչի արդյունքում Երևանի քաղաքապետարանը միակողմանի, մասնակի (Պայմանագրի ընդհանուր գումարի 9,726,088 ՀՀ դրամի չափով) հրաժարվում է կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված՝ միաժամանակ առաջարկելով Ընկերությանը նույն ծանուցումը ստանալու օրվա դրությամբ վճարել Պայմանագրով նախատեսված տուգանքը:

Ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Ընկերության տնօրենը՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով պարտավորությունների չկատարման պատճառաբանությունները՝ հայտնեց, որ Պայմանագրով սահմանված աշպխատանքների կատարման ընթացքում Ընկերությունը հանդիպել է մի շարք խոչընդոտների, ինչի արդյունքում վերջինիս չի հաջողվել սահմանված ժամկետում կատարել պատվեր-առաջադրանքները: Մասնավորապես.

Սարի Թաղ 25-րդ փողոց հ. 7 հասցեին կից նախատեսված քանդման աշխատանքների իրականացման ժամանակ Ընկերության աշխատակիցները հանդիպել են ինքնակամ կառուցապատողի դիմադրությանը, նրանց միջև ծագել է թեժ վիճաբանություն, որը Ընկերության տնօրենը փորձել է հարթել բանակցությունների միջոցով: Արդյունքում, ինքնակամ կառուցապատողը համաձայնել է դադարեցնել

շինարարական աշխատանքները մինչև քաղաքապետարանի կողմից համապատասխան թույլտվություն ստանալը:

Ինչ վերաբերում է Կենտրոն վարչական շրջանի Բարձրաբերդի 1-ին փողոցի հ.27 հասցեի դիմաց գտնվող տաղավարի ապամոնտաժման աշխատանքների չկատարմանը, ապա, Ընկերության տնօրենի խոսքով, Ընկերության աշխատակիցները այստեղ նույնպես հանդիպել են դիմադրության, որն ուղեկցվել է սպառնալիքներով և Ընկերության աշխատակիցների նկատմամբ ուժի գործադրմամբ: Բացի այդ, քաղաքացի Բ.Խալաթյանի ընտանիքի անդամները հավաստիացրել են, որ տաղավարն օրինականացված է, սակայն համապատասխան փաստաթղթերը կներկայացվեն մի քանի օր անց՝ քաղաքացի Բ.Խալաթյանի ՀՀ վերադառնալուն պես:

Ընկերության տնօրենը՝ ներկայացնելով աշխատանքների չկատարման պատճառները, վկայակոչեց քաղաքապետարանի համապատասխան աշխատակիցներին, որոնք ներկա են գտնվել վերը նշված իրադարձությունների ընթացքում: Միևնույն ժամանակ, քաղաքապետարանի ներկայացուցիչը հայտնեց, որ աշխատանքների կատարման ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ որևէ տեղեկատվություն Ընկերության կողմից Պատվիրատուին պաշտոնապես չի փոխանցվել:

Պատվիարատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ Սարի Թաղ 25-րդ փողոց հ. 7 հասցեին կից կառուցվող ապօրինի շինարարությունը շարունակելու պաշտոնական թույլտվություն քաղաքապետարանի կողմից չի տրվել, ինչպես նաև չեն ներկայացվել Կենտրոն վարչական շրջանի Բարձրաբերդի 1-ին փողոցի հ.27 հասցեի դիմաց գտնվող տաղավարի օրինական կառույց լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը:

Բողոքներ քննող անձի այն հարցին, թե արդյո՞ք Ընկերության տնօրենը կամ վերջինիս որևէ ներկայացուցիչ դիմել է իրավապահ մարմիններին, երբ Ընկերության աշխատակիցները ինքնակամ կառուցապատողների կողմից հանդիպել են ագրեսիվ գործողությունների, որոնցով վերջիններս խոչընդոտել են Ընկերության պայմանագրային պարտավորությունների կատարմանը, Ընկեերության տնօրենը պատասխանեց, որ իրավապահ մարմիններին չի դիմել, քանի որ նման իրավասություն չի ունեցել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ

(կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Աննա 80» ՍՊԸ-ն 17.03.2018թ. Երևանի քաղաքապետարանի հետ կնքել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-18/54» ծածկագրով գնման պայմանագիրը, սակայն պայմանագրով սահմանված ժամկետում չի կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները ողջ ծավալով, ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

-Պատվիրատուի և Ընկերության միջև 04.06.2018թ. ստորագրվել է երկկողմ հաստատված փաստաթուղթ՝ հանձնման-ընդունման արձանագրություն, որով ֆիքսվել է Ընկերության կողմից՝ 273,912 ՀՀ դրամ արժեքով Կենտրոն վարչական շրջանի

Խորենացու 2-րդ փակուղի N17/7 հասցեում կառուցված շվաքարանի քանդման աշխատանքների կատարված լինելը:

- Ընկերության կողմից որևէ քայլ չի ձեռնարկվել Ընկերության աշխատակիցների նկատմամբ ինքնակամ կառուցապատողների ագրեսիվ գործողությունները կասեցնելու և պայմանագրով ստանձնած պարտավորությունների իրականացումն ապահովելու ուղղությամբ (իրավապահ մարմիններին որևէ դիմում չի ներկայացվել):

Հաշվի առնելով վերը նշված փաստական հանգամանքները՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ պայմանագրով նախատեսված աշխատանքները նույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված՝ համապատասխան պատվեր-առաջադրանքներով նախատեսված ժամկետներում չկատարելով՝ Ընկերությունը խախտել է Երևանի քաղաքապետարանի և «Աննա 80» ՍՊԸ-ի միջև 17.03.2018թ. կնքված «ԵՔ–ԲԸԱՇՁԲ–18/54» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը, հետևաբար, առկա է «Աննա 80» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.06.2018թ. թիվ 26-3/11906-18 գրությամբ «Աննա 80» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 06906663) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Աննա 80» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի՝ որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ